

կարողութիւնք՝ որ միայն մարդուս սեպ. հական են : Ուղեղային գործարանաւորութեամբ մարդուս նմանող կենդանեաց վրայ այսպիսի կարողութեանց և ոչ հետքերը կը տեսնուին :

Ո՞վ կարող է մեկնելու ուրեմն նման մարմնոց մէջ եղած այս հրաշալի տարբերութիւնները՝ եթէ ընդունելու ըլլանք թէ մարդուս վրայ ամեն բան դործարանաւորութենէն միայն առաջ կու գայ : Առանց մարդս կապկին մօտեցընելու միթէ անոնց նիւթականնրմանութիւնը բացայայտ չցուցընէր այն անսահման անդունդը՝ որ այս երկու էակները մէկմէկէ կը բաժնէ :

Ուրեմն մտաւոր մարդը կենդանական ցեղապետութիւնը կը պսակէ, կենդանական յաջորդութեան գագաթը կը կենայ . բայց ըստ բացատրութեան չենրիկոս Պլէնվիլի՝ կենդանական յաջորդութիւնը կ'անցնի և անոր վրայ բարձր կը թռչի :

#### ԿՐԱՍԻՈՒՅ

Թարգմ. Միքայէլ Հեղիսմեան.

Հարաւային Ամերիկոյ աղետալի արկան :

Բանահան 6 սեպտ. 1868

Հարաւային Ամերիկոյ արևմտեան ծովափունքը սոսկալի երկրաշարժէ մը սասանեցաւ, որտւն նմանը պատմական ժամանակներէ ետքը երբեք հանդիպած չէր նոյն երկրին մէջ : Հիւսիսէն 'ի Գուիդոյէ (Quito) սկսեալ, այսինքն է՝ հասարակածի զծէն առնելով, ինչուան Քլոէ (Chloe) կղզիներն 'ի հարաւոյ, երկու հազար մղոն, կամ զրեթէ եօթը հարիւր ծովային փարսախ միջավայրի վրայ՝ երկարատե ճամփով տեսեցին՝ գետինը ճեղքեցին, ծովը զայրացուցին և աւեր ու արհաւրք պատճառեցին : Քսան նշանաւոր քաղաք և անթիւ աւանք արդ ուրիշ

բան չեն՝ բայց եթէ կոյտ աւերակաց : Բովանդակ բնակիչք՝ որոնց թիւը 30,000 կը համարուի, կորեան իսպառ: Երեք հարիւր հազար անձինք առանց քնակութեան են և մեծ մասն 'ի սովոր կը լիկուին: Բոլոր Հար. Ամերիկա սգոյ մէջ է . զար մը պէտք է այսչափ դրժբաղդութեան դարման ընելու համար: Ինչուան հիմա ընդունած տեղեկութիւննիս 'ի հարկէ անկատար են և անմիաբան . շատը չափազանց են, շատն ալ պակասաւոր . սակայն ամեն ծանօթ աղբիւրներէն աւելի կրնայ հիմակուընէ ամենաճշմարտանման համարուիլ այս մանրամասն տեղեկութիւններն որ ես կը խաւրեմ:

Սկսելով 'ի հիւսիսոյ՝ այս աղէտքէն հարուածեալ երկիրներն են Հասարակածի հասարակապետութիւնը, Բերու, Պոլիվիա և Քիլի:

Ամսոյն (օգոստոս) 13ին զգալի եղան առաջին ցնցմունքն . 16ին տակաւին ճօմունքն զգալի էին ամենուրեք և շատ տեղ վտանգաւոր:

Բերու և Հասարակածն եղան սաստկագոյն վնաս կրողները: Բերուի մէջ առաջին զղբդիւնը գրեթէ ամեն տեղ միանգամայն զգալի եղաւ, ամսոյն 13ին՝ երեկոյեան ժամը 5ին մօտ: Ամենէն սաստիկ բռնութեամբ ճօմունք կրող տեղերն են Արեգուիրա (Arequipa) 15 փարսախ ներսով, և Մոզեկուա (Moquegua) 10 փարսախ ծովափունքէն 'ի խոր: Արեգուիրա մօտ էր Միստի հրաբղիսին. Մոզեկուա՝ Ուպինաս հրաբրդիսին: Դաքնա (Tacna) և Իքա (Ica) նոյն զծի վրայ՝ բայց միայն վեց և ութը փարսախ ծովափունքէն հեռու ըլլալով՝ նուազ վնասուեցան . իսկ Քալլաո (Callao) համեմատութեամբ շարժէն չվնասուեցաւ, այլ իրեն հրդեհն և ողողումը անհնարին աղետից պատճառ եղան: Նոյն ժամանակն որ երկիրը կը սասանէր և ծովը փողոցներուն տիրապետեր էր, վաթսուն տուն մոխրի կոյտ դարձեր էին կամ հրդեհէն դառնապէս խանձեր էին:

Արեգուիրա՝ Բերուի առաջին գեղե-

ցիկ քաղաքը՝ ալ չկայ. քար քարի վը-  
րայ մնացած չէ. 50 հազար բնակիչ  
ունէր՝ երկու հարիւրը միայն մեռան,  
այլք փախստականք են, թափառա-  
կանք, հացագուրկ և տնանկը:

Գետինը նախ շարժեցաւ, յետոյ կո-  
հականման ծփեցաւ. ալ ոտքի վը-  
կանգուն կենալն անկարելի էր. տու-  
ներն ամենը մէկէն ինկան կործանե-  
ցան թղթաշէն դղեակներու նման:  
Նոյն գիշերը 9—10 ճօճմունք իմացուե-  
ցաւ. գետինը շատ տեղ ճեղքուած է  
և լայնախոր պատառուածք լի են ջրով:  
Մերձաւոր երկու աւանք՝ Դիապայա  
(Tiabaya) և Սապաւտիա (Sabaudia)  
և շրջակայ բազմաթիւ գիւղաքաղաքք  
նոյն աղետալից վախճանն ունեցան:

Արեգուիբայէն ետքը հարաւային  
բերուի երկրորդ նշանաւոր քաղաքը  
իգուիզա (Iquique) գրեթէ ամրողա-  
պէս քանզեցաւ. Ամսոյն 13ին՝ ժամը  
5ին ատենները ստորերկրեայ թընդ-  
մունք նշան տուին. Ժողովուրդը փողոց-  
ները թափեցաւ և գրեթէ անմիջապէս  
սասանութիւնն սկսաւ: Ամենայն ինչ  
'ի հիմանց շարժեցաւ. վայրկեան մը  
ետքը ծովս իր սահմանն ընդարձակեց  
ահեղագոչ և որոտաձայն մոնչմամբ,  
և անխտիր մաքրեց սրբեց ինչ որ կան-  
գուն մնացեր էր:

Փայտէ եղած ամենայն ինչ կաղինի  
կեղեի նման ջախջախեցաւ: Ժողովը-  
դեան աճապարանք փախչելովս հան-  
դերձ երկու հարիւր մեռեալ կը հա-  
մարուի:

Արիգուա (Ariqua) ծաղկեալ քաղաք  
մ' էր, և թերեւս բոլոր հար. Ամերիկոյ  
արևմտեան ծովափանց առաջին գեղե-  
ցիկ ու զարդարուն նաւահանգիստը.  
իր տեղն ուր որ էր՝ հիմա ամայի ծովե-  
զերք մ' է: Հոն ապաւինեալ հինգ նա-  
ւէն մէկն ալ չալեկոծեցաւ: Միաբան-  
նահանգաց պատերազմական տեամերն  
էր wateree անունով՝ որ ծովածփանքի  
մը ծայրը վերանարով գրեթէ երկու  
միոն տեղ դէպ 'ի երկրին ներար ան-  
դափոխեցաւ: Այլք կորեան իրենց նա-  
ւաստեաց մեծ մասովը:

Ամերիկացի Fredonia բեռնաբարձ  
նաւը՝ մարդիկ և ստացուած՝ ամենայն  
ինչ կորսնցուց, բաց 'ի երեք սպայից  
որ ցամաքն էին:

Շալայի (Chala) նաւահանգիստը  
գրեթէ կէս հեռաւորութեամբ ընդ մէջ  
Քալաոյի և իգուիզայի մեծամեծ վնաս-  
ներ կրեց: Շարժ մը անընդհատ քա-  
ռասունը հինգ րոպէտ տևեց և իրարու-  
ետև նոյնչափ տեղողութեամբ տասուեր-  
կու շարժ համրուեցաւ:

Ծովս իրեք անգամ քաշուեցաւ և  
իրեք անգամ գարձեալ եկաւ լեցուե-  
ցաւ, ամեն մէկ դառնալուն աւերակ-  
ներ զիզելով: Նաւահանգիստը խան-  
գարեցաւ: Բնակիչք քաշուեցան յիսլէյ  
(Islay), ութը փարսախ հեռաւորու-  
թեամբ: Այս տեղս զրիցը պատճառաւ  
ծովէն չվնասուեցաւ, թէպէտ ալիք ի-  
րեն նաւահանգիստն ալ կ'ողողէին 60  
ոտք բարձր շարժուն պարսպի նման:

Canton գաղղիացի եռակայմը՝ որ  
բեռ առնելու համար հոն կը գտնուէր՝  
ծովափունքը նետուեցաւ, բայց ծփան-  
քին ետ քաշուելուն ժամանակ ինքն  
ալ ետ մղուեցաւ և կրցաւ բացը ելլել:  
Քաղաքին մէջ ամենայն ինչ որ քար  
կամ կրաշաղախ էր՝ փլատակեցաւ:

Դամալոյ աւանը հիմնայատակ եղաւ,  
ուր հինգ հարիւրէ աւելի մարդ մե-  
ռաւ: Դիապէ, վիդոր Մալիէնտոյ և  
Մէծիա (Medjia) անհետացան, ինչ-  
պէս նաև հարիւր յիսուն միոն երկայ-  
նութեամբ ամենայն գիւղաքաղաքք:  
Մէժիլեռնի հազիւ հետքը մնացած է,  
ուր Գաղղիա մեծ շահ ունի կորանոյ  
ըստած պարարտութենէն:

Ի Դաքնա 64 ցնցմունք զգալի եղաւ  
և գետինը գեռ կը դողար վերջին լու-  
րերուն ժամանակ. քառասուն տուն  
հիմնայատակ եղան. մնացածներն էին  
խեղճ փայտեայ շէնքեր. Սամա, Լա-  
քոմպա ալ նոյն բազոն ունեցան: Այս  
կողմն գետինը լի էր պատառուածնե-  
րով՝ որոնցմէ տաք ջուրի հեղեղներ կը  
բղիւէին: Լուդա հովիտը խոպանա-  
ցաւ. 'ի բիղակուա (Pisagua) երեք  
նաւ՝ մարդիկ և ստացուածք կորուսին:

Դիդոյ բնակութեան ամենեին հետք Թմացած չէ . հինգ հարիւր բնակչէն՝ քսանը մեռան կամ խղդուեցան . այլք ժամանակ ունեցան փախչելու . տոօր մը և երկու ցօլետե ընկղմեցաւ :

Վինքա (Chincha) կղզիներն անանկ ցնցուեցան որ անկարելի էր ոսքի վըրայ կենալ . բնակիչք ամենքն առհասարակ գետին տապալեցան . կը կարծէին որ իրենց վերջին ժամն հասեր է . սակայն քիչ մարդ զոհ եղաւ : Հինգ մեծ բեռնաբարձ նաւեր իրարու զարնուեցան ու ջարդուբուրդ եղան կամ սաստիկ վնասուեցան . փոքրիկ նաւերն ամենքն ալ անհետ եղան :

Յետ Բերուի՝ Հասարակածի հասարակապետութիւնը սոսկալի թշուառութիւններ կրեց . մանաւանդ թէ հոն մեռնողաց թիւը շատ աւելի եղաւ : Ջարմանալի բան . կուայագուիլ (Guayaquil) 43ին ամենաթեթև ժամ մը զգալի եղաւ , բայց իրեք օր եաքը 16ին եղաւ հոն մեծ շարժը՝ որ ամենայն ինչ քաննդեց կործանեց :

Իպարը՝ իմպատուրա նահանգին զիսաւոր քաղաքը , Ոլովալոյ , Բինիքոյ (Pinicho) , Ս . Անտոն , Ս . Պողոս (San Pablo) , Ագունդագուի (Atuncuquí) , Իվանդատ (Iwantadt) , Քոդոքախի (Cotocachi) և այլն , հարթայատակ եղան : Լիճ մը կը ծածկէ հիմա այն տեղն ուր կը ծաղկէր երբեմն քողոքախի : Կուայագուիլ չվնասուեցաւ : Գուիդոյ հասարակապետութեն մայրաքաղաքը , ինչպէս նաև Լիմա Բերուի մայրաքաղաքը՝ ամբողջապէս չկործանեցան : Բայց սակայն գրեթէ ամեն շէնքերն այնպէս քայրայած են՝ որ ամենաթեթև շարժմունք մը բաւական է զիրենք կործանելու . Արդէն կործանած են Ս . Օդոտինոսի եկեղեցին ու վանքը , ուրիշ երկու եկեղեցիք , Մայր եկեղեցւոյն և Ս . Մարկոսի աշտարակները , Ս . Լուգովիկի վարժարանը , և այլն : Ուրիշ եկեղեցեաց աշտարակները , քաղաքապետին պալատը , շատ մը առանձնականաց տուներ ճեղքուած են ու վայրկենէ վայրկեան փլչելու վտանգի մէջ են :

Մերձակայ աւաններն որ են գուիդոյ , Բերուլոյ , Բուելարոյ և Փաշիկուանեոյ , գրեթէ իսպառ անհետացան : Քիչ մարդ մեռաւ ՚ի գուիդոյ , բայց բովանդակ տէրութեան մէջ մեռնողներուն թիւը 20,000 կը համրուի : Իսկ ապրեաներն ամեն կողմ կը փախչէին ՚ի սովոր և դիականց գարշահոտ արտաշընչութենէն հալածուելով :

Քիլի նորօրինակ երեսութիւ մը ականատես եղաւ . յայտնի է թէ ասիկաշարժէ ազատ երկիր է , սակայն և ոչ ցնցմունք եղաւ հոն . բայց ծովեղերաց բովանդակ երկայնութեամբը , գիշերուան տասնըմէկին ատենները , ծովը քաշուեցաւ և գարձեալ դէպ ՚ի ափունքը գարձաւ զարհուրելի շառաչմամբ :

Ի Դակբահուան (Talcahuane) նաւահանգստին բնակիչքը իրենց բնիկ փորձովը կամ 1835ին աղետալի արկածից աւանդութեամբը խրատուած՝ առաջին վայրկեանէն որ ջրերն սկսան հեռանալ բարձրերը փախան , և այս կանխատեսութեամբ ազատ մնացին մեծամեծ թշուառութիւններէ : Ծովը բոլոր գիշերը քաղաքը կը հարուածէր , փողոցներուն մէջ պատուքելով , մերժընդ մերժ նահանջելով , տուններն ու շտեմարանները պարպելով և եղած բանները բոլոր հեռացնելով :

Վալբարախզոյ վախ կար որ ծովաթումբն ու քաղաքը ողողին . բայց ծովը հանգարտեցաւ քիչ մը ժամանակ փրփրալից կոյտերով բարձրաւանդակը ծածկելէն և ծովափունքն եղող ամայի բարձր ժայռերը թնդացնելէն եսքը :

Պոլիվիոյ լուրերը գեռ ծանօթ չեն , բայց հաւանական է որ այս տեղեկութեանց վրայ նոր ձախորդութիւններ ալ պիտի աւելցնեն :

Այս սոսկալի աղետից մէջ միիթարական է լսելը թէ բազումք մարդասիրական զգացմամբ մեծ գործունէութիւն ցուցեր են , և թէ ամենուրեք վարչութիւնք և առանձնական անձինք կը փութան այսչափ թշուառութեանց

օդնութիւն մը մատակարարելու : — Բերուի նախագահը ժող . Պալդա յորդորագիր մը հրատարակեց որ զորովալից պերճախօսութեան օրինակէ : Բաց ասկէ ժողովքէն ( Congrès ) անմիջապէս երկու միլիոն բիասդր ձեռք բերաւ առաջի կարգի շտապողական պիտոյից գործածելու համար : Միաբան-Նահանգաց Powhatan անուն պատերազմական steamerը , Դուռնը ծովակալին դրօշովը պաշարաբարձ՝ ֆալլայէն Արիդուա ճամբայ ելաւ : Լամոթ-Բիքէ գաղղիացի steamerին հրամանատարը՝ որ կայսերական ծովային զինուորութենէն է , ինքզինքը տէրութեանց կամացը յանձնեց և նոյնպէս Արիդուա գընաց : Միուրիշն անունով steamerը նոյնպէս լի պարէնիւք ճամբայ ելաւ , բայց մեքենան վնասուելով՝ հարկ եղաւ որ նաւահանդիստ մը ապաւինի :

Լիմա քաղաքին Բարեգործական ընկերութիւնը վճռեց որ ամեն կործանած քաղաքներէն եօմիլ տարուրնէ վար մնացած որբ տղաքը իր ծախսին հողայ . կառավարութիւնը 18,000 բիասդր չորհեց որպէս զի այս վախճանաւ որբանոց մը կառուցուի : Նոյն քաղաքին խնամապետական խորհրդարանը 100,000 բիասդր փոխ խաւեց որպէս զի փութով անհրաժեշտ կարօտելոց օդնութիւն ըլլուի : Առանձնականք ալ իրենց գթասրտութիւնը անմիջապէս յայտնեցին . կուանոյի ընկերութիւնը 500,000 բիասդր տուաւ տէրութեան առանց շահը պահանջելու :

Բերուի արդարութեան պաշտօնակալը Օժանդակիչ ընկերութեան մը զլուխ անցաւ և դէպ՚ի հարաւային գեղերը սկաւ պտըտիլ , և ըստ վերջին լրոց մէկ միլիոն տուլլարի ստորագրութիւն ժողովուեր էր արդէն :

Վերջապէս Պ . Քալտերոն 50,000 տոլլար աղաս դրամ տուաւ . նոյնպէս նաև Պ . Հենրիկ Միկս ( Miggs ) Արեգուիրայի երկաթուղեաց ամերիկացի գործակատարը նոյնչափ դումար մալինքը չնորհեց :

Էր յօւսանք որ այս ազնիւ օրինակ-

ներն իրենց նմանող նախանձորդներն ունենան և բոլոր աշխարհ ընկերանայ այս բարեգործութեան մեծ գործոյն՝ եղած անհուն թշուառութիւնն սփոփելու համար :

## ԲԱՆԱԼԻՒԹ

### ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՅ

(Տես Երես 195)

### Ա. ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆՔ

122 Ի՞նչպէս կրնայ ըլլալ որ երկրիս թանձր կեղել կարենայ յագենալ քիչ մը ջրով որ իր վրայ կինկնայ : — Երկիրս չուտով կը յագենայ ջրով . վասն զի մշակելի հողուն տակ՝ որ փափուկ և ծակոտկէն է , քիչ մը խորութենէ ետեւ կարծր և անթաթու խաւեր կան՝ որոնց մէջն ջուրն ձամբայ չգտնար անցնելու . և վրանին մը նալով՝ կամաց կամաց կարգելու անձրեսին մնացեալ քանակութիւնը երկրիս մէջ թափանցելէն :

123 Այն ջուրն որ կը թափանցէ երկրիս ծակտեաց մէջ և անթաթու խաւ մը գրտնալով վրան կը կենայ , կը մնայ հոն ինչուան որ չոգիացումը զինքը ցնդէ : — Ոչ . այլ որովհետեւ ջուրը միշտ տարածուիլ կ'ուզէ հարթհաւասար , այն անթաթու խաւին ամեն դրից վրայ ալ ծաւալելով կը ժողովի անոր խորուծոց տեղուանքը . և երբ ասանկ աեղ մը հաւաքուի բաւական քանակութեամբ , կը սկսի ունենալ զօրութիւն մը՝ որ կը ներգործէ կողմերուն վրայ սաստիկ ճնշում մը . ինչուան որ կարենայ բանալ բաւական հանգիստ ճամբայ մը և յատակ մը , որուն վրայ կը վազէ երբեմն մզոններով , ինչուան որ հանդիպի յատակին վրայ փոսի մը կամուռած տեղույ մը , և ստիպուի դարձեալ մակերեսութիւն վրայ երենալ :

124 Ի՞նչ կ'ըսուին այն ջուրերն որ ինքնին կամ արուեստով երկրիս ծոցէն երեսը կ'ելլեն : — Բղիմունք կամ աղբիորք կ'ըսուին :

125 Ինչու համար աղբիորքին ջուրը երբեմն կամաց կը հոսի , երբեմն ալ ուժով կը ցայտէ գետնին ծակերէն , և բաւական ալ կը բարձրանայ : — Եթէ այն չտեմարանը ուր կը ժողովի ջուրն՝ ստորերկրեաց ջրանցքներուն մէջ մտնելէն առաջ աղ-